

ԵՎՐԱՍԻԱԿԱՆՆԵՐԸ*

Առաջաբան

Ռուս մեծ փիլիսոփա, գրող և հրապարակախոս **Նիկոլայ Ալեքսանդրի Բերդյասևը** (1874–1948) իրավամբ համարվում է ոչ միայն Ռուսաստանի, այլև ողջ աշխարհի 20-րդ դարի առավել հայտնի և հեղինակավոր մտածողներից մեկը:

Նա ծնվել է Կիևում՝ տոհմիկ գինվորականների ընտանիքում, այդ իսկ պատճառով մանուկ հասակում ուսում է առել Կիևի կադետական կորպուսում: Սակայն հրաժարվելով գինվորականի կարիերայից՝ 1894 թ. ընդունվում է Կիևի համալսարան, սկզբում՝ բնագիտության բաժին, իսկ մեկ տարի անց տեղափոխվում է իրավաբանական ֆակուլտետ: Ինչպես այն ժամանակվա ուսանողական երիտասարդության շատ այլ ներկայացուցիչներ, նա հետաքրքրվում է մարքսիզմով և նույնիսկ զբաղվում հեղափոխական գործունեությամբ: Դրա պատճառով 1898 թ. ձերբակալվում և հեռացվում է համալսարանից, 1900–1903 թթ. անցկացնում է քստրում՝ Վոլոգդայում, ոստիկանության հսկողության տակ: Այդ տարիներին սկիզբ է առնում նրա հիասթափությունը մարքսիզմից, և աճում է հետաքրքրությունն իդեալիստական փիլիսոփայության հանդեպ: 1904 թ. Բերդյասևը գալիս է Սանկտ Պետերբուրգ, իսկ 1908-ին՝ Մոսկվա:

Բերդյասևի փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա հսկայական ազդեցություն են գործել ռուսական երեք հեղափոխությունները: Արդեն 1905–1907 թթ. նա ելույթ է ունենում սոցիալական խնդիրները լուծելու հարցում ռուսական արմատականության որդեգրած գործելակերպի դեմ:

Ռուսաստանում բարեփոխումներն անհրաժեշտ համարելով՝ Բերդյասևը ընդհանուր առմամբ պաշտպանեց 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, սակայն Բերդյասևը չընդունեց 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը: 1917–1922 թթ. Բերդյասևը դասավանդում էր, հանդես էր գալիս հրապարակային դասախոսություններով՝ ստեղծելով «Հոգևոր մշակույթի ազատ ակադեմիան»: Ուստի 1922 թ. այլ փիլիսոփաների խմբի հետ միասին նա վտարվեց Խորհրդային Ռուսաստանից:

Բերդյասևը տարագրության մեջ սկզբում ապրում է Բեռլինում, իսկ 1924 թվականից՝ Ֆրանսիայում (Փարիզի մերձակայքում): 1925–1940 թթ. իր

*Ընդունվել է տպագրության 10.08.2015:

կողմից հիմնադրված «Путь» («Ուղի») ամսագրի՝ «ռուսական արտասահմանի» կրոնափիլիսոփայական ամենախոշոր ու նշանակալից հրատարակության խմբագիրն էր, որի հետ համագործակցում էին ոչ միայն ռուսները, այլ նաև կրոնական ուղղվածության արևմտյան բազմաթիվ խոշոր մտածողներ: 1947 թ. Քեմբրիջի համալսարանը Բերդյակին շնորհում է աստվածաբանության դոկտորի կոչում՝ ի նշան նրա վաստակի գնահատման: Մահացել է 1948 թ. իր տանը՝ հենց գրասեղանի մոտ:

Բերդյանն աշխարհին հայտնի է առաջին հերթին որպես էքզիստենցիալիզմի և պերսոնալիզմի հիմնադիրներից մեկը: Անմիջականորեն եվրասիականությանը նվիրված և «Ուղի» ամսագրում հրատարակված նրա հոդվածները՝ «Եվրասիականները» (1925, N 1) և «Եվրասիականների ուտոպիական էտատիզմը» (1926, N 8), Բերդյակի առավել հայտնի աշխատություններից չեն, սակայն դրանցում արտահայտված շատ գաղափարներ մեր օրերում անսպասելիորեն դարձյալ արդիականություն են ձեռք բերել: Դա կապված է Ռուսաստանում եվրասիականների գաղափարների որոշակի «վերածննդի» հետ նախ՝ 1980-ականներին Լ. Ն. Գումելյովի ստեղծագործություններում, ապա 1990-ականներին՝ ԽՍՀՄ-ի անկումից հետո (Ա. Դուգին և ուրիշներ), և հատկապես վերջին տարիներին՝ կապված Ռուսաստանի նախագահ Վ. Վ. Պուտինի կողմից բազմաբևեռ աշխարհակարգ ստեղծելու անհրաժեշտության հռչակման հետ:

Եվրասիականության մասին Բերդյակի հոդվածների նշանակությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այդ հոսանքի պատմությանն ու դավանած գաղափարախոսությանը, ինչպես նաև համաձայնությանը համատեքստին, որի շրջանակներում այն ծագել է ու զարգացել: Եվրասիականությունն առաջացել է 1920-ական թվականներին ռուսական վտարանդիական միջավայրում: «Ռուսական արտասահմանի» գաղափարախոսների համար կարևորագույն թեման Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունն էր և դրա հետևանքները: Պ. Յա. Չառդակի հայտնի արտահայտությանը համահունչ՝ այդ հեղափոխությունը ամենից հաճախ դիտվում էր որպես ողբերգական դաս, որ Ռուսաստանը տվեց աշխարհին, իսկ նրա քննարկումը հիմնականում տեղի էր ունենում դեռևս 19-րդ դարի վերջին Վ. Ս. Սոլովյովի կողմից ձևակերպված «ռուսական գաղափարի» (այսինքն՝ «համաշխարհային պատմության մեջ Ռուսաստանի լինելիության իմաստի» մասին) ուսմունքի դիտանկյունից: Այդ ոգեղեն փնտրտուքի միջավայրում էլ երևան է գալիս «եվրասիականության» հայեցակարգը: Նրա հիմնադիրներն էին լեզվաբան Ն. Ս. Տրուբեցկոյը, տնտեսագետ և աշխարհագրագետ Պ.Ն. Մավիցկին և պատմաբան Գ. Վ. Ֆլորովսկին, իսկ ավելի ուշ նրանց հարեցին բազմաթիվ այլ մտածողներ, բայց այն հատկապես հետևողական զարգացում ստացավ փիլիսոփա Լ. Պ. Կարսավինի աշխատություններում:

Եվրասիականների գաղափարների շարադրանքով առաջինը հանդես եկավ Ն. Ս. Տրուբեցկոյը «Եվրոպան և մարդկությունը» (Մոֆիա, 1920) աշխատության մեջ: Այնտեղ նա հայտարարեց, որ ռուսական մշակույթի և հոգեկերտվածքի ակունքները պետք է փնտրել ոչ միայն Կիևյան Ռուսիայում, այլ նաև մոնղոլական կայսրության մեջ (այսպես կոչված «թուրանաթաթարական հայեցակարգ») և որ ԽՍՀՄ-ում բոլշևիկները, ակնհայտորեն

չգիտակցելով դա, ըստ էության իրականացնում են Արևմուտքին դիմագրավելու եվրասիական նախագիծը, և դա է նրանց գործունեության **պատմական ձևարտությունը**: Այդպիսով, Հոկտեմբերյան հեղափոխությունը և բոլշևիկների գործունեությունը էմիգրանտների մի մասի մեջ թեկուզև ուրույն կերպով՝ դրական գնահատական էր ստանում:

Եվրասիականները եռանդով զբաղվում էին իրենց գաղափարների քարոզչությամբ: Արդեն 1921 թ. Սոֆիայում լույս է տեսնում ««Ելք դեպի Արևելք»: Կանխագագացումներ և իրականացումներ: Եվրասիականների ինքնահաստատումը» հոդվածների ժողովածուն, 1922 թ. Բեռլինում՝ «Ուղիների վրա» ժողովածուն, 1923 թվականին՝ «Ռուսաստանը և լատինականությունը»: 1923 թ. եվրասիական հատուկ գրահրատարակչության ստեղծումից հետո սկսեց լույս տեսնել եվրասիականների ծրագրային արևանախր՝ «Եվրասիական ժամանակագիրը»-ը, և զուգահեռ՝ «Եվրասիական քրոնիկներ» ամսագիրը: 1926 և 1927 թվականներին լույս տեսան երկու կոլեկտիվ մանիֆեստներ՝ «Եվրասիականություն. համակարգված շարադրանքի փորձ» և «Եվրասիականություն (1927 թ. ձևակերպում)»: Այդ հրատարակչության կողմից լույս էին ընծայվում նաև եվրասիականների առանձին մենագրությունները: 1925 թվականից սկսվեց այս հոսանքի կազմակերպական ձևավորումը: Բայց արդեն 1927 թ. եվրասիական շրջանակներում ձևավորվում է «ձախ» թև (Լ. Կարսավին, Ս. Էֆրոն, Դ. Սվյատոպոլկ-Միրսկի և ուրիշներ)¹: Եվ «ձախերի» մեջ ոչ միայն նրանք էին, ովքեր որոշակի իմաստով արդարացնում էին բոլշևիկներին, այլ նաև նրանք, ովքեր բոլշևիկների հետ կապեր ունեին ու նույնիսկ սկսել էին գաղտնի համագործակցել Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի (ԲՎԿ) հետ: 1930-ականների սկզբին եվրասիականներին հաջողվեց վերականգնել միասնությունը և նույնիսկ իրենց կուսակցությունը ստեղծել, բայց արդեն այդ տասնամյակի վերջին այս շարժումը գործնականում անհետացավ:

«Ուղի» ամսագրում (1925, N 1, էջ 134-138)² Բերդյակի կողմից հրատակված «Եվրասիականները» հոդվածը Բեռլինում 1925 թ. լույս տեսած «Եվրասիական ժամանակագրի» պատասխանն էր: Այդտեղ Բերդյակը խոսում է եվրասիականների ուսմունքի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին: Որպես դրական նա նշում է, որ սա էմիգրանտական միջավայրում ծագած միակ **հետհեղափոխական** ուղղությունն է: Այսինքն՝ մի ուղղություն, որն ընդունել է կատարված հեղափոխության իրականությունը, մինչհեղափոխական ժամանակաշրջանին վերադարձի անհնարիությունը. «Մա միակ հետհեղափոխական գաղափարական հոսանքն է, որն առաջ է եկել վտարանդիական միջավայրում և շատ ակտիվ ուղղություն է: Մնացած բոլոր ուղղությունները՝ «ձախերը» և «աջերը», մինչհեղափոխական բնույթ ունեն և դրա համար էլ ապագայում անհուսորեն զուրկ են ստեղծագործական կյանքից և նշանակությունից» (էջ 213): Նա նաև ընդգծում է, որ «Եվրասիականները տարերայնորեն, հուզակալորեն պաշտպանում են Ռուսաստանի և ռուս ժողովրդի արժանապատ-

1 Վերջին երկուսը 1930-ական թվականներին վերադարձան ԽՍՀՄ, որտեղ հետագայում հալածանքների ենթարկվեցին:

2 Ըստ http://www.odinblago.ru/path/1/9_2, Բերդյակի հոդվածի հաջորդ մեջբերումների հղումները տրվում են ըստ «ՎԷ» հանդեսի ներկա համարում հրատարակվող հայերեն թարգմանության:

վությունն ընդդեմ անարգանքի, որին այժմ այն ենթարկվում է և՛ ռուսների, և՛ Արևմուտքի մարդկանց կողմից» (էջ 213): Եվ այստեղ պետք է նկատել, որ Հոկտեմբերյան հեղափոխության և բոլշևիկների նկատմամբ Բերդյանի վերաբերմունքը զգալիորեն տարբերվում էր նրանից, որ տիրում էր էմիգրանտական միջավայրում. այդպես էլ չընդունելով հեղափոխությունը՝ նա գոնե ձգտում էր հասկանալ դրա իրական պատճառները, ինչը հատկապես վառ կերպով արտացոլված է նրա ավելի ուշ հրատարակված «Ռուսական կոմունիզմի ակունքներն ու իմաստը» աշխատության մեջ:

Քննադատաբար վերլուծելով եվրասիականների հայեցակարգը՝ Բերդյանն իրավացիորեն նշում է, որ դրա գաղափարները շատ դեպքերում բխում են սլավոնասերների (սլավոնաֆիլների) հայեցակարգից և ամենից առաջ Ն. Յա. Դանիլևսկու «Ռուսաստան և Եվրոպա» (1871 թ.) գրքում շարադրված ուսմունքից: Ինչպես և իրենց գաղափարական նախորդները, եվրասիականները պնդում էին, որ Ռուսաստանը արևմտյանից տարբերվող՝ զարգացման այլ ուղի ունի: Հիշեցնենք, որ Դանիլևսկին մշակել էր ուսմունք մշակութային տարբեր տիպերի (քաղաքակրթությունների) մասին, որոնցից յուրաքանչյուրն օժտված է ինքնատիպությամբ և զարգանում է ինքնուրույն կերպով: Նման մոտեցման դեպքում արևմտաեվրոպական («ռոմանոգերմանական») մշակույթը, ինչպես և, ի դեպ, ռուսականը, դառնում էին տարբեր մշակութային տիպեր, որոնցից յուրաքանչյուրը ոչ միայն ունի գոյության իրավունք, այլ նաև համամարդկային մշակույթի կարևոր մասն է հանդիսանում:

Այս մոտեցումը, որն այժմ անվանում են «քաղաքակրթական», կտրուկ հակասության մեջ էր մտնում մարդկության գլոբալ զարգացման՝ 19-րդ դարում գերիշխող հայեցակարգի հետ, որի համաձայն՝ գոյություն ունի միայն մեկ ճանապարհ, և բոլոր ժողովուրդները տարբեր արագություններով շարժվում են նրանով: Հեգելի մոտ դա շարժումն է Բացարձակ իդեալի ինքնաձանաչման ուղով, կրոնական մտածողների մեծանասնության (Վ. Ս. Սոլովյով և ուրիշներ) մոտ՝ շարժումը դեպի Աստված կամ Աստծո արքայություն, Կ. Մարքսի մոտ՝ մարդկության սոցիալ-տնտեսական զարգացումը՝ կոմունիզմի ձանապարհին, և այլն:

Բայց չնայած նպատակների և դրանց հետ կապված՝ պրոգրեսի չափանիշների բազմազանությանը, այդ բոլոր մտածողներին միավորում է մի բան՝ անվերապահ վստահությունը, որ նման ձանապարհը միայն մեկն է՝ բոլորի համար ընդհանուրը, ընդ որում ներկա հանգրվանում նրանում հենց Եվրոպան է գլխավորում մարդկությանը:

Սլավոնասերների կողմից այս մոտեցման մերժումը կապված էր ոչ միայն Նապոլեոնի հանդեպ հաղթանակից հետո ռուսական հասարակության մեջ հաստատված ազգային հպարտության զգացումի, այլ նաև զարգացման կապիտալիստական ուղու լավ նկատելի արատների հետ³: Պատահական չէ, որ ողջ 19-րդ դարը ամբողջ Եվրոպայով մեկ տեղի ունեցող հեղափոխությունների և խռովությունների դարաշրջան էր, հանուն իր իրավունքների պրոլետարիատի հեղափոխական պայքարի վերելքի շրջան:

3 Ժամանակակից ընթերցողին հարկ է հիշեցնել, որ 19-րդ դարում բանվորները գործարաններում և ֆաբրիկաներում ունեին 14-16-ժամանոց աշխատանքային օր, լիովին բացակայում էին բուժօգնությունը, կենսաթոշակն ու հաշմանդամության որևէ ապահովագրություն:

Ուստի նույնիսկ այդպիսի հայտնի «արևմտական» ու հեղափոխության գաղափարախոս, ինչպիսին Ա. Գերցենն էր, Ռուսաստանի համար չցանկանալով զարգացման արևմտյան ուղու սարսափները, ի դեմս ռուսական գյուղացիական համայնքի փորձում էր սոցիալական արդարության հասարակությանը և սոցիալիզմին անցնելու այլ միջոց գտնել:

Անգուսպ լավատեսությանը և պրոգրեսի բացարձակ բարիք լինելու մասին հավատին բավականին լուրջ հարված հասցրեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթացքում բազմաթիվ գիտատեխնիկական նվաճումներ վերածվեցին զանգվածային ոչնչացման զենքերի (թունավոր գազեր, սուզանավեր, զրահամեքենաներ, սավառնակներ և այլն): Պատերազմը լուրջ կասկածներ հարուցեց ինչպես զարգացման եվրոպական ուղու ճշմարիտ, այնպես էլ միակ հնարավորը լինելու վերաբերյալ: 1920-ականներին այս տեսակի գաղափարները ողջ աշխարհում հատկապես հանրաձանաչ են դառնում Օ. Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» (հատ. 1, 1918, հատ. 2, 1922) գրքի ազդեցությամբ, որն ուղղված էր ավանդական եվրոպակենտրոնության ու գլոբալ զարգացման հայեցակարգի դեմ: Շպենգլերը, ինչպես և ավելի վաղ՝ Դանիլևսկին, պաշտպանում էր մարդկության պատմության ընթացքում ինքնուրույն գոյություն ունեցող մի ամբողջ շարք քաղաքակրթությունների առկայության մասին միտքը: Անցնելով զարգացման բոլոր բնական աստիճանները («մանկություն», «ծաղկում», «ծերություն»)՝ յուրաքանչյուր քաղաքակրթություն իր ժամանակին կործանվում է՝ տեղ ազատելով նորերի համար: Միասնական ուղու բացակայությունը հանում էր նաև առաջադիմության միասնական չափանիշների վերաբերյալ հարցը և ուրեմն անհնարին էր դարձնում նաև տարբեր քաղաքակրթությունների համեմատությունը՝ ըստ նրանց առաջադիմականության: Արևմտաեվրոպականը (ռոմանագերմանականը) այդ բոլոր քաղաքակրթությունների շարքում ընդամենը շատերից մեկն էր և, ավելին, Շպենգլերի կարծիքով՝ արդեն մահացողը, դեպի անցյալ հեռացողը: Ի դեպ, նույն Շպենգլերը գրում էր նոր, ռուս-սիբիրյան քաղաքակրթության սկզբնավորման մասին: Հենց այս մթնոլորտում էլ ծնվում է եվրասիականների ուսմունքը: Եվ ահա Տրուբեցկոյը, ինչպես Դանիլևսկին ու Շպենգլերը, պնդում էր, որ մարդկությունը չունի ոչ մի «առաջադիմության մայրուղի», ուրեմն և չկա պրոգրեսի ոչ մի ընդհանուր չափանիշ:

Բերդյասևի կարծիքով՝ Դանիլևսկու ուսմունքի հետ համեմատելու պարագայում (Շպենգլերին նա չի հիշատակում) եվրասիական մոտեցման յուրահատկությունը միայն թուրանական վարկածի օգտագործման մեջ է, այսինքն՝ այն ուսմունքի, համաձայն որի ռուսական քաղաքակրթության կայացման մեջ կարևորագույն դեր է խաղացել մոնղոլական մշակութային տիպը և թաթար-մոնղոլական լուծը:

Լինելով կրոնական ուղղվածության մտածող՝ Բերդյասևը չի կարողանում հրաժարվել այն մտքից, որ մարդկային ողջ պատմությունը դա ձանապարհն է դեպի Աստված: Բայց նա չի կարող չտեսնել նաև այն, որ զարգացման արևմտյան ուղին իր անհատապաշտությամբ, ռացիոնալիզմով և օգտապաշտությամբ մարդկությանը շեղում է այդ ձանապարհից:

Բերդյասևի կարծիքով՝ եվրասիականների ելույթն այն ժամանակ դեռևս ավանդական՝ եվրոպակենտրոնության դեմ կապված էր նրա հետ,

որ եվրասիականները «... ձիշտ են զգում, որ Եվրոպան դադարում է մշակույթի մենատեր լինել, որ մշակույթն արդեն բացառապես եվրոպական չի լինելու, որ Ասիայի ժողովուրդները նորից մտնելու են համաշխարհային պատմության հոսքի մեջ» (էջ 212): Սակայն գնահատելով եվրասիականների վերաբերմունքն Արևմտյան Եվրոպայի հանդեպ, Բերդյակը խիստ կերպով արձանագրում է, որ «Եվրասիականների վերաբերմունքը Արևմուտքի և արևմտյան քրիստոնեության հանդեպ իր հիմքում կեղծ է և ոչ քրիստոնեական: Այլ ժողովուրդների հանդեպ անսերության և նողկանքի արմատավորումը մեղք է, որի համար պետք է ապաշխարել» (էջ 214): Նրա կարծիքով նման վերաբերմունքն արժանի է կոչվելու ասիականություն, այլ ոչ թե եվրասիականություն: Բերդյակը եվրասիականների հիմնական սխալը տեսնում է այն իրողությունը չըմբռնելու մեջ, որ սկսվում է նոր՝ «ունիվերսալիստական» դարաշրջանը, որում տեղի է ունենում Արևմուտքի և Արևելքի քաղաքակրթությունների ամենալայն փոխներթափանցումը: Եվ այդ մշակութային տիպերից և ոչ մեկն այլևս չի կարող ներփակ գոյատևել: Մինչդեռ՝ «Եվրասիականները ցանկանում են մնալ Եվրոպայից փակված ու Եվրոպային թշնամացած ազգայնականներ: ...Նրանց եվրասիական մշակույթը լինելու է արևելյան, ասիական փակ մշակույթներից մեկը» (էջ 214):

Նոր՝ «ունիվերսալիստական» դարաշրջանի գալստյան վերաբերյալ Բերդյակի մարգարեական միտքը, այն տարիների համար հնարավոր է չափազանց համարձակ, իր հաստատումն է գտել գլոբալացիայի արդի դարաշրջանում:

Եվ բավականին հետաքրքիր է Բերդյակի եզրակացությունն այն մասին, որ այժմ Ռուսաստանի առջև ծառայած խնդիրը ոչ թե ներփակվելու, այլ համաշխարհային տարածություն դուրս գալու առաջադրանքն է: Եվ բացազատումը, համաշխարհային տարածություն դուրս գալը ամենևին էլ ի նշանակում Ռուսաստանի եվրոպականացում ու ենթարկում արևմտյան սկզբունքներին, այլ Ռուսաստանի համաշխարհային հոգևոր ազդեցություն, սեփական հոգևոր հարստությունների բացահայտում Արևմուտքին: Եվ ամենից առաջ՝ համամարդկայնության ու համաշխարհայնության, ցանկացած այլ ժողովրդի հանդեպ հարգանքի գաղափարների, քանի որ «Ժողովուրդները, ռասաները, մշակութային աշխարհները չեն կարող չարի և ստի բացարձակ կրողներ լինել» (էջ 214):

Գրեթե հարյուր տարի է անցել այն ժամանակներից, երբ Բերդյակը գրել է այս տողերը: Այդ ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել: Բայց այդ խնդիրը չէ՞ արդյոք նախկինի պես կանգնած նաև՝ ժամանակակից Ռուսաստանի առջև...

Գալինա Վ. Գրինենկո
Փիլիսոփ. գիտ. դոկտոր (Մոսկվա)

Եվրասիականները⁴ հանդես եկան աղմկոտ և ինքնավստահ՝ ինքատիպության և նոր մայրցամաքներ հայտնագործելու մեծ հավակնություններով: Թերությունները սովորական են երիտասարդ և մարտական ուղղությունների համար. նրանք չեն կարող աճել համեստության մեջ: Եվրասիականների գաղափարները պետք է գնահատել ոչ միայն ըստ էության, որքան ըստ դրանց հատկանշական արժեքի: Այդ գաղափարներն ինքնին շատ օրիգինալ չեն⁵. դրանք հին սլավոնասերների, Ն. Դանիլևսկու (հատկապես Ն. Դանիլևսկու), 20-րդ դարի սկզբի որոշ մտածողների (այդպես իր տրամադրվածությամբ տիպիկ եվրասիական էր Վ. Ֆ. Էրնը) մտքերի վերարտադրություններն են: Բայց ժամանակակից եվրասիականներն ունեն նոր հակվածություն, երիտասարդական խանդավառություն, առկա է ոչ թե ճնշվածություն հեղափոխությունից, այլ հետհեղափոխական առույգություն, և նրանց տաղանդավորությունը հնարավոր չէ ժխտել: Նրանք որսում են պատերազմ և հեղափոխություն վերապրած ռուս երիտասարդության լայնորեն տարածված որոշակի տրամադրությունը, գաղափարապես ազնվացնում են «աջ» բնագույները: Նրանց գաղափարախոսությունը համապատասխանում է նոր սերնդի հոգեկերտվածքին, որում տարերային բնույթ ունեցող ազգային ու կրոնական զգացումը կապված չէ բարդ մշակույթի, ոգու հիմնահարցի հետ: Եվրասիականությունը առաջին հերթին հուզական, այլ ոչ թե ինտելեկտուալ ուղղություն է, և նրա հուզականությունը տեղի ունեցած աղետի հանդեպ ազգային և կրոնական ստեղծագործ բնագույների հակազդեցությունն է: Այս տեսակ հոգեկան գոյավիճակը կարող է հանգեցնել ռուսական ֆաշիզմի:

Կուզեինք առաջին հերթին արձանագրել եվրասիականության դրական կողմերը: Եվրասիականները պարզունակ ռեստավրատորներ չեն, որոնք մտածում են, թե առանձնապես ոչինչ չի կատարվել, և ամեն ինչ շուտով իր նախկին տեղը կընկնի: Եվրասիականները զգում են, որ համաշխարհային լուրջ ճգնաժամ է, որ պատմական նոր դարաշրջան է սկսվում: Այդ ճգնաժամի բնույթը նրանք այնքան էլ ձիշտ չեն պատկերացնում՝ ենթադրելով, որ նրա էությունը ժամանակակից, եվրոպական քաղաքակրթության քայքայման և վերջի մեջ է (սլավոնասիրական մտքի հին, ավանդական մտտիվ): Բայց նրանց ծառայությունն այն է, որ սուր կերպով զգում են տեղի ունեցած շրջադարձի չափերը և մինչ պատերազմն ու հեղափոխությունը եղածին վերադառնալու անհնարինությունը: Եվրասիականները վճռակալորեն հռչակում են մշակույթի առաջնությունը քաղաքականության հանդեպ: Նրանք հասկանում են, որ ռուսական հարցը ներկայումս ամենից առաջ հոգևոր-մշակութային և ոչ թե քաղաքական հարց է: Այդ գիտակցության հաստատումը ռուսական վտարանդիական միջավայրում շատ կարևոր և հրատապ խնդիր է: Եվրասիականների վերաբերմունքը Արևմտյան Եվրոպայի հանդեպ անձիշտ է և կեղծ, և նման վերաբերմունքը արժանի է կոչվելու ոչ թե եվրասիականություն, այլ ասիականություն: Բայց նրանք ձիշտ են զգում, որ Եվրոպան դադարում է մշակույթի մենատեր լինել, որ մշակույթն արդեն բացառապես եվրոպական չի լինելու, որ Ասիայի ժողովուրդները նորից մտնելու են համաշխարհային պատմության հոսքի մեջ: Այս միտքը, ի դեպ, առանձնահատուկ հետևողականությամբ արտահայտվել է տողերս գրողի կողմից: Նման միտքը շատ կարևոր է որպես հակակշիռ այն հետադիմական հոսանքներին, որոնք մտածում են «բուրժուական» Եվրոպայի օգնությամբ էլք գտնել ռուսական աղետից: Եվրասիականները տարերայնորեն, հուզականորեն պաշտպանում են Ռուսաստանի և ռուս ժողովրդի արժանապատվությունն ընդդեմ

4 Թարգմանված է ռուսերենից: Բնօրինակը տե՛ս «Евразийский Современник. Книга Четвертая». Журнал «Путь», N 1, Берлин, 1925, էջ 134 և հաջ.:

5 Ինքնատիպ է միայն իշխան Ն. Ս. Տրուբեցկոյի՝ ռուսական պատմության թուրանաթաթարական համադրույթը:

այն անարգանքի, որին այժմ նա ենթարկվում է և՛ ռուսների, և՛ Արևմուտքի մարդկանց կողմից: Հեղափոխությունից խոցված՝ ռուս հասարակության վերին խավը համաձայն է ապագգայնանալ և դադարել իրեն ռուս համարել: Իր նման հետադիմական-միջազգայնական տրամադրվածությամբ այդ խավն ապացուցում է ռուսական ենթահողից և ռուս ժողովրդի հոգևոր հիմքերից իր հին կտրվածությունը: Առավել մեծ համակրանքի են արժանի եվրասիականների քաղաքական հայացքներն ու տրամադրությունները: Սա միակ հետհեղափոխական գաղափարական հոսանքն է, որն առաջ է եկել վտարանդիական միջավայրում և շատ ակտիվ ուղղություն է: Մնացած բոլոր ուղղությունները՝ «ձախերը» և «աջերը», մինչ-հեղափոխական բնույթ ունեն և դրա համար էլ ապագայում անհուտորեն զուրկ են ստեղծագործական կյանքից և նշանակությունից: Եվրասիականները սովորական «աջերից» ու «ձախերից» դուրս են կանգնած: Հենց նոր լույս տեսած «Եվրասիական ժամանակագրքի» չորրորդ գրքում վճռական հարվածներ են հասցվում «աջերին», և մերկացվում է նրանց կրոնական-ուղղափառ ու ազգային-ռուսական հավակնությունների սուտը: Իշխան Ն. Ս. Տրուբեցկոյն ասում է, որ «աջերի» համար ուղղափառությունը և ժողովրդայնությունը միշտ էլ ընդամենը եղել են ինքնակալության հատկանիշները, որը նրանց հետաքրքրող միակ բանն է: Դաժան, բայց արդար են իշխան Ն. Տրուբեցկոյի բառերը, թե ուղղափառության նկատմամբ «աջերի» հետաքրքրությունը գլխավորապես արտահայտվում է բարձրաստիճան անձանց անվանակոչության օրերի աղոթքներին այցելելու մեջ:

Եվրասիականները լեգիտիմիստներ չեն: Դա պարզ էր արդեն նախորդ ժողովածուից: Նրանք ուղղափառությունը և ռուսական ազգային ոգին չեն կապում որոշակի պետական ձևի, օրինակ՝ ինքնակալական միապետության հետ, և համաձայն են նաև հանրապետությանը, եթե այն լինի ուղղափառ և ազգային, և նախագահը լինի «դրածո»:

Եվրասիականները ոչ թե ժողովրդավարական, այլ ժողովրդական ուղղվածություն ունեն և հաշվի են առնում ժողովրդական զանգվածների նշանակությունը Ռուսաստանի ապագա կառույցի մեջ: Ի տարբերություն «աջերի»՝ նրանք տեսնում են, որ ժողովրդական նոր խավը կյանքի առաջին շարքերն է առաջացել, և որ նրան դուրս մղել չի լինի: Եվրասիականներն ընդունում են, որ հեղափոխություն է եղել, և որ նրա հետ պետք է հաշվի նստել: Ժամանակն է դադարել կատարվածի վրա սեփական աչքերը փակել: Մինչհեղափոխական ոչինչ այլևս հնարավոր չէ, հնարավոր է միայն հետհեղափոխականը: Եվրասիականությունն իր ձևով է փորձում լինել հետհեղափոխական ուղղություն, և դա այլ ուղղությունների հանդեպ նրա առավելությունն ու անվիճելի ներդրումն է: Նրանք ավելի իրատես են այլ ուղղությունների համեմատ և կարող են քաղաքական դեր խաղալ: Եվ պետք է խոստովանել, որ Ռուսաստանի քաղաքական կյանքում դերակատարություն կունենա գլխավորապես երիտասարդությունը:

Սակայն եվրասիականության մեջ կան նաև չարաղետ և թունավոր տարրեր, որոնց պետք է դիմակայել: Ռուսական հին մեղքերից շատերը ուռճացած ձևով փոխանցվել են եվրասիականությանը: Եվրասիականները զգում են համաշխարահային ճգնաժամը: Սակայն նրանք չեն հասկանում, որ Նոր պատմության ավարտը, որին մենք ներկա ենք, միևնույն ժամանակ նոր ունիվերսալիստական դարաշրջանի առաջացումն է, ինչը նման է հելլենիստական դարաշրջանին: Ազգայնականությունը Նոր պատմության ծնունդն է: Այժմ ավարտվում են փակ ազգային գոյացությունների ժամանակները: Բոլոր ազգային օրգանիզմները նետված են համաշխարհային հորձանուտն ու համաշխարհային տարածությունները: Տեղի է ունենում Արևելքի և Արևմուտքի մշակութային տիպերի փոխներթափանցում: Դադարում է Արևմուտքի ավտարկիան, ինչպես և դադարում է Արևելքի փակ տիրապետությունը: Հելլենիստական դարաշրջանը իսկապես «եվրասիական» մշակույթի դարաշրջան էր, բայց այն ինաստով, որ նրանում միավորվել էին Արևելքն

ու Արևմուտքը, Ասիան ու Եվրոպան: Այս տիպի «Եվրասիականությունը» ունիվերսալիզմ է, որը հող նախապատրաստեց քրիստոնեության համար: Բայց ժամանակակից եվրասիականությունը թշնամական է ցանկացած ունիվերսալիզմին, նա եվրասիական պատմամշակութային տիպը պատկերացնում է որպես ներփակակալական (ստատիկ): Եվրասիականները ցանկանում են մնալ Եվրոպայից փակված ու Եվրոպային թշնամացած ազգայնականներ: Դրանով նրանք ժխտում են ուղղափառության տիեզերական նշանակությունը և Ռուսաստանի՝ որպես համաշխարհային պատմության երկու հոսանքն իր մեջ միավորող Արևելք-Արևմուտքի մեծն աշխարհի համաշխարհային առաքելությունը: Նրանց եվրասիական մշակույթը լինելու է արևելյան, ասիական փակ մշակույթներից մեկը: Նրանք ցանկանում են, որ աշխարհը մնա պառակտված, Ասիան ու Եվրոպան՝ տարանջատված, այսինքն՝ նրանք ըստ էության հակաեվրասիականներ են: Եվրասիականությունը մնում է ընդամենը որպես աշխարհագրական եզրույթ և ձեռք չի բերում պատմամշակութային իմաստ, որը հակադիր է ամեն տեսակի ներփակման, ինքնագոհության և ինքնաբավարարվածության: Խնդիրը, որն այժմ ծառայում է Ռուսաստանի առջև, ոչ մի ընդհանուր բան չունի մինչպետրոսյան, հին Ռուսաստանի առաջ կանգնած խնդրի հետ: Դա ոչ թե ներփակման, այլ համաշխարհային տարածություններ դուրս գալու խնդիր է: Եվ բացազատումը, համաշխարհային տարածություններ դուրս գալը բոլորովին չի նշանակում Ռուսաստանի եվրոպականացում ու ենթարկում արևմտյան սկզբունքներին, այլ Ռուսաստանի համաշխարհային հոգևոր ազդեցություն, Արևմուտքի առջև սեփական հոգևոր հարստությունների բացահայտում: Այդպես պետք է աշխարհում ձևավորվի միամակն հոգևոր տիեզերքը, որում ռուս ժողովուրդը պետք է իր մեծ ներդրումն ունենա: Ռուսական գաղափարը, որը մշակվել է 19-րդ դարի ռուս մտքի կողմից, միշտ էլ այդպիսի գաղափար է եղել: Եվ եվրասիականները հավատարիմ չեն ռուսական գաղափարին, նրանք խզում են մեր կրոնական-ազգային մտքի լավագույն ավանդույթների հետ: Նրանք մեկ քայլ նահանջում են Խոնյակովի և Դոստոևսկու համեմատ, և այդու՝ նրանք հոգևոր հետադիմականներ են: Նրանք բաժանարարներ են՝ ռուսական համամարդկայնության ու համաշխարհայնության հակառակորդներ, Դոստոևսկու ոգու հակառակորդներ: Դանիլևսկին նրանց ավելի հոգեհարազատ է, քան Դոստոևսկին: Խոնյակովն ու Դոստոևսկին զարմանալի բառեր էին գտնում՝ արտահայտելու ռուսական վերաբերմունքը Արևմտյան Եվրոպայի, այդ «սուրբ հրաշքների աշխարհի» հանդեպ, մեծարելու նրա մեծ հանգուցյալներին և մեծ հուշարձանները: Կ. Լեոնտևը սիրում էր Արևմուտքի մեծ մշակույթը, նրա մեծ կաթոլիկական, արիստոկրատական, գեղարվեստական անցյալը: Կ. Լեոնտևը վճռական հակապավոնասեր և հակազգայնական էր իր գաղափարախոսությամբ՝ շատ դեպքերում հոգեհարազատ Չառդանին և մոտ Վլ. Մոլոյովին, և ներկայիս եվրասիականները քիչ կարող են օգտվել նրանից՝ իրենց ավանդույթը հաստատելու համար:

Եվրասիականների վերաբերմունքը Արևմուտքի և արևմտյան քրիստոնեության հանդեպ իր հիմքում կեղծ է և ոչ քրիստոնեական: Այլ ժողովուրդների հանդեպ անսերության և նողկանքի արմատավորումը մեղք է, որի համար պետք է ապաշխարել: Ժողովուրդները, ռասաները, մշակութային աշխարհները չեն կարող չարի և ստի բացարձակ կրողներ լինել: Դա բոլորովին քրիստոնեական հայեցակետ չէ: Քրիստոնեությունը թույլ չի տալիս բարու և չարի, լույսի և խավարի այդտեսակ աշխարհագրական և ազգագրական բաշխում: Աստծո առջև բարին ու չարը, ճշմարիտն ու անճիշտը բաշխված չեն Արևելքի ու Արևմուտքի, Ասիայի ու Եվրոպայի միջև: Ոչ թե 19-րդ դարի մարդիկ, այլ քրիստոնեությունը աշխարհ բերեց այն գիտակցությունը, որ գոյություն չունի հելլեն և հրեա: Ատելությունն արևմտյան քրիստոնեության, կաթոլիկության հանդեպ, մեղք է ու մարդասպանություն, արևմտյան ժողովուրդների հոգու ժխտում, նրանց կյանքի և փրկության աղբյուրների մերժում: Կաթոլիկության հանդեպ ատելությունը, ինչպես երևում է, եվրասիական ծրագրի առանց-

քային կետերից մեկն է⁶: Հատկանշական է, որ կաթոլիկության հանդեպ սովորաբար առանձնակի թշնամբար են տրամադրված հենց նրանք, ովքեր կաթոլիկական կղերական և իշխանապետական գծեր են ներմուծում ուղղափառության մեջ: Կաթոլիկության հանդեպ եվրասիականների վերաբերմունքի մեջ ինչ-որ խորապես գավառամիտ և հնացած բան կա՝ ժառանգված վաղուց անցած ժամանակներից և աշխարհի ժամանակակից հոգևոր վիճակին չհամապատասխանող: Աշխարհին սկսում է տիրել հակաքրիստոսը, ռուսական թագավորությունը դադարել է քրիստոնեական լինել, դարձել է հակաքրիստոսական ոգու օջախ, իսկ եվրասիականների աչքին դեռ երևում են երբեմն իսկապես դատապարտելի գործողություններ կատարող, բայց համաշխարհային աղետի մեջ շատ փոքր կշիռ ունեցող՝ լեհական քայոնձներ ու ճիզվիտներ:

Եվրասիականները վերականգնում են Դանիլեսկու պատմամիմաստական տեսությունը և յուրացնում նրա նատուրալիզմն ու նոմինալիզմը: Եվրասիականների և Դանիլեսկու պատմամիմաստասիրական հայացքները նոմինալիզմի միամիտ և փիլիսոփայորեն չարդարացված ձև են, մարդկություն իրողության՝ նոմինալիստական հերքում: Եվրասիականները իրապաշտ են ազգության հասկացման մեջ և նոմինալիստ՝ մարդկության ըմբռնման մեջ: Սակայն իրական միասնությունների նոմինալիստական կազմաքանդումը չի կարելի կամայականորեն կանգնեցնել այնտեղ, որտեղ ուզում ես:

Նոմինալիզմը չի կարող ընդունել ազգության իրականությունը նույնպես, ինչպես և չի կարող ճանաչել նաև մարդկային անհատականության իրականությունը - իրական միասնությունների կազմաքանդումը հասնում է մինչև անվերջություն: Եթե մարդկությունը կամ տիեզերքը իրականություն չեն, ապա նույնքան էլ անիրական են նաև մյուս բոլոր աստիճանները: Եվրասիականները կարծես թե ուզում են վերադառնալ քրիստոնեությամբ հոգևոր առումով հաղթահարված հեթանոսական պարտիկուլյարիզմին: Եթե գոյություն չունի մարդկությունը՝ որպես հոգևոր միասնություն և իրականություն, ապա քրիստոնեությունն անհնար է և ամեն իմաստից զուրկ է աստվածակերպությունը և մեղքի թողությունը: Մարդկության՝ որպես կեցության հիերարխիական աստիճանի, իրականության և միասնության ժխտումն ըստ էության Քրիստոսի աստվածամարդության դոգմայի ժխտում է: Եկեղեցական նացիոնալիզմի և պարտիկուլյարիզմի ծայրահեղ ձևերը հեթանոսական հակազդեցություն են քրիստոնեության ներսում՝ Քրիստոսի աստվածամարդության մասին ճշմարտությունը ընկալելու անընդունակություն: Պառակտում է մարմինն ու արյունը, իսկ ոգին միավորում է: Եվ հավասարապես կեղծ է մարդկության իրականության ու միասնության հերքումը, այնպես, ինչպես ազգության իրականության ու միասնության մերժումը: Աշխարհը հիերարխիկ օրգանիզմ է՝ կոնկրետ համայնամիասնություն: Դրա համար էլ միջազգայնությունը նույնպիսի մոլորություն է, նույնպիսի վերացականություն, ինչպիսին և ազգայնամոլությունը: Եվրասիականները չափազանց թեթև են վերաբերվում քրիստոնեության և հեթանոսական պարտիկուլյարիզմի փոխհարաբերության խնդրին, նրանք այդ տագնապալից հարցից թաքնվում են «կենցաղային խոստովանականության» հուզականության մեջ: Եվրասիականներն իրավացի են, երբ ասում են, որ արևմտաեվրոպական մշակույթը միակ և ունիվերսալ մշակույթը չէ, որ այն սոսկ սահմանափակության տարրեր ունեցող ռոմանագերմանական մշակույթ է: Եվ չէ՞ որ եվրոպական մշակույթի ներսում հսկայական տարբերություն գոյություն ունի ռոմանական ու գերմանական մշակույթային տիպերի միջև:

Ֆրանսիացիների համար գերմանական մշակույթը գրեթե նույնպիսի Արևելք է՝ ոչ Եվրոպա, ինչպես որ ռուսական կամ հնդկական մշակույթն է: Մշակույթը

⁶ Այստեղ ես բոլորովին չեմ անդրադառնում Լ. Պ. Կարսավինի «Ուրացված կրոնի դասեր» հոդվածին, քանի որ այն հատուկ դիտարկման է արժանի: Այդ հոդվածում շատ հետաքրքիր մտքեր կան, բայց, ցավոք, այն փչացված է իր տհաճ տոնի պատճառով:

միշտ ազգային է, այն երբեք միջազգային չէ, ու միևնույն ժամանակ այն վերագրային է իր նվաճումներով և իր ունիվերսալ հիմքերով: Մարդկային մշակույթի ունիվերսալ հիմքերը ոչ թե ժամանագերմանական են, այլ անտիկ: Ինչպես որ եվրոպական ժողովուրդների մշակույթը, ռուսական մշակույթը նույնպես իր հիմքերն ունի հունական մշակույթի մեջ: Մենք ոչ միայն Արևելքին ենք պատկանում, այլ նաև Արևմուտքին՝ հելլենական ժառանգության միջոցով: Մենք պլատոնականներ ենք: Արևմտյան մարդիկ մեծ մասամբ արիստոտելականներ են: Մեզ վրա նիրհել է հելլենական ոգին, հելլենական ընդհանրական հանձարը: Մենք վերջնականապես կդառնայինք ասիացիներ՝ արևելյան մարդիկ, եթե հրաժարվեինք հունական հայրաբանությունից, սբ. Կղեմես Աղեքսանդրիացուց, կապադովկիացիներից, եթե թուրանական սկիզբը վերջնականապես գերիշխեր մեր մեջ:

Եվ ինձ թվում է, որ եվրասիականները թուրանական մարմնական ժառանգությունը գերադասում են հելլենական հոգևոր ժառանգությունից, նրանք ավելի հպարտանում են Չինգիզ Խանի, քան Պլատոնի և Եկեղեցու հույն ուսուցիչների հետ իրենց կապով: Պատմության եվրասիական փիլիսոփայությունը մաքուր նատուրալիզմ է: Ազգային-ռասայական և աշխարհագրական պատմափմաստասիրությունը նույնքան նյութապաշտական է, որքան որ տնտեսական մատերիալիզմը: Նա ժխտում է, որ պատմության փիլիսոփայությունը ոգու փիլիսոփայություն է՝ մարդկության հոգևոր կյանքի փիլիսոփայություն: Նա մոռանում է, որ, բացի Արևելքից և Արևմուտքից, բացի ռասաների և արյունների ընդհարումներից, կա նաև ոգու թագավորություն, և որ դրա շնորհիվ է միայն աշխարհում հնարավոր դարձել քրիստոնեությունը:

Սլավոնասերները պակաս նատուրալիստ էին: Նրանք գերմանական իդեալիզմի դպրոցն էին անցել և այն հաղթահարել ներքուստ: Եվրասիականների մտածողության մեջ բոլորովին չկա հոգևոր ազատության կատեգորիան, որը Խոնյակովի մտածողության հիմքն էր: Տպավորությունն է ստեղծվում, որ եվրասիականների համար ուղղափառությունը ամենից առաջ ազգագրական գործոն է՝ ֆոլկլոր, ազգային մշակույթի կենտրոնական իրողություն: Նրանք ուղղափառությամբ դրսից են մտնում՝ պատմականորեն, այլ ոչ՝ ներսից, ոչ որպես իր նշանակությամբ տիեզերական՝ հոգևոր կյանքի գործոն: Այդ պատճառով նրանք ամենից առաջ փայփայում են կենցաղային ուղղափառությունը, նրա ստատիկ-գեղակերպ կերպարներով: Խոսում են, իհարկե, ոչ թե առանձին եվրասիականների անձնական կրոնական փորձի, այլ նրանց մտածողության մասին:

Եվրասիականները սիրում են թուրանական տարրը՝ ռուսական մշակույթի մեջ: Երբեմն թվում է, թե նրանց հոգեհարազատ է ոչ թե ռուսականը, այլ ասիականը, արևելյանը, թաթարականը, մոնղոլականը՝ ռուսերենով: Ակներևաբար, Չինգիզ Խանին նրանք գերադասում են Սբ. Վլադիմիրից: Նրանց համար Մոսկովյան թագավորությունը կնքված թաթարական թագավորություն է, մոսկովյան ցարը՝ ուղղափառադարձ թաթարական խան: Ու եվրասիականներին սրտամոտ այս թագավորության մեջ մերթ զգացվում է ասիական ցեղերի չհաղթահարված հեթանոսությունը, մերթ չհաղթահարված մահմեդականությունը: Քրիստոնեությունը լիովին չի հաղթել եվրասիական կայսրության մեջ: Մերը՝ իսլամի հանդեպ, մահմեդականության նկատմամբ հակումը չափազանց մեծ են եվրասիականների մոտ: Մահմեդականները ավելի հարազատ են եվրասիականի սրտին, քան Արևմուտքի քրիստոնյաները: Եվրասիականները պատրաստ են միասնական ձևակառուցված բոլոր արևելյան-ասիական, ոչ քրիստոնեական դավանանքների հետ՝ ընդդեմ Արևմուտքի քրիստոնեական դավանանքների⁷: Եվ սա կրոնական հոգեբանության անտարակուսելի այլաբերվածություն է, քրիստոնեության հանդեպ մասնակի դավաճանություն:

⁷ Այստեղ ես նկատի չունեմ եվրասիականների կողմից Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների հանդեպ եվրոպական պետությունների կայսերապաշտական քաղաքականության քննադատությունը: Այդ առումով եվրասիականներն իրավացի են: Ես նկատի ունեմ զուտ կրոնական հարցը:

Դարձյալ տեղին է եվրասիականներին տալ Վլ. Սոլովյովի հարցը. «Ինչպիսի՞ Արևելք ես ուզում լինել՝ Քսերքսեսի Արևելք, թե՛ Քրիստոսի»: «Քսերքսեսի Արևելքը» նրանց շատ է գերում, նրանք չեն կարողանում նրան հաղթել իրենց մեջ և չեն ուզում նրան հաղթել՝ ռուս ժողովրդի մեջ: Մինչդեռ ինչպես մեր բոլշևիզմը, նա «Քսերքսեսի Արևելքի» ծնունդ է:

Ռուս ժողովրդի ողջ ապագան կախված է նրանից, թե կհաջողվի արդյոք նրա մեջ հաղթահարել ոչ քրիստոնյա Արևելքը, թաթարական տարերքը, ռուս ժողովրդի դեմքից ջնջել Լենինի մոնոլիական դիմագծերը, որոնք եղել են նաև հին Ռուսաստանում: Կարելի է լիովին համաձայնել այն բանի հետ, որ թաթարական լուծը ունեցել է հսկայական ոչ միայն բացասական, այլ նաև դրական նշանակություն ռուսական պատմության մեջ, որ նա նպաստել է ռուս ժողովրդի մեջ արևմտյանից տարբերվող՝ ինքնուրույն հոգևոր տիպի մշակմանը: Մակայն դա դեռ բնավ չի տանում թաթարական ինքնագիտակցությանը, ռուսական գաղափարի փոխարինմանը՝ թուրանական գաղափարով:

Մինչդեռ եվրասիականների մեջ կորչում է ռուսական հոգևոր տիպի, ռուսական գաղափարի, ռուսական տիեզերական քրիստոնեական գաղափարի ինքնատիպությունն ու եզակիությունը: Կայականությունը (ստատիկությունը), որով մեր ժամանակների բուռն շարժումներին հակազդելու արդյունքում այդքան արբեմում են եվրասիականները, ոչ թե ռուսական, այլ թաթարական կայականություն է: Քրիստոնեությունը իր բնույթով ձկուն է, նա է ստեղծել համաշխարհային պատմության բուռն շարժումը: Ոչ մի վերջավոր չի կարող լինել առհավետ գտնված անսահմանի գոյաբանական արտահայտություն: Ի դեմս եվրասիականների Ռուսաստանի՝ հնարավոր չէ ճանաչել Դոստոևսկու Ռուսաստանը: Արժե հիշել, որ Դոստոևսկին երևան եկավ ռուսական պատմության Պետրոսյան շրջանում: Չի զգացվում նաև եվրասիականների հարազատությունը Սբ. Սերաֆիմի ոգեղենությանը, որը նույնպես երևան է եկել Պետրոսյան ժամանակաշրջանում:

Պարզվում է՝ եվրասիականներին օտար է 19-րդ դարի ռուս հոգևոր մտքի տագնապալից, որոնող, հարաշարժ, ողբերգական ոգին: Ռուսական այդ հոգևոր մտքի մեջ թուրանական ոչինչ չի եղել: Եվրասիականների կենցաղային և տոհմական ուղղափառությունը, կայական ուղղափառությունը, հարազատ է իսլամի ոգուն, և նրանք իրենք էլ դա չեն թաքցնում: Եվրասիականները փայփայում են ռուսական հեթանոսությունը, որը շատ ուժեղ էր հին ռուսական կենցաղում: Մտածել, թե այդ կենցաղը կարող է վերածնվել, նշանակում է չհասկանալ մեր դարաշրջանի բնույթը:

Մենք թևակոխում են նոր քրիստոնեական ոգեղենության դարաշրջան: Եվ կրոնական առումով հետադիմական է այն ամենը, ինչը ցանկանում է ոգեղենի հանդեպ արյան ու մարմնի գերակայություն, ինչը խանգարում է նատուրալիզմի հանդեպ ոգու հաղթանակին: Ռուս ժողովրդի վերադարձը մինչպետրոսյան հին Ռուսիայի ինքնաբավությանն ու ինքնավավությանը ոչ թե քրիստոնեական, այլ հեթանոսական խնդիր է:

Եվրասիականները չեն սիրում Վլ. Սոլովյովին և այն ամենը, ինչը կապված է Վլ. Սոլովյովի հետ: Բայց հայրենասիրական և ազգային չէ սեփական մեծագույն մտածողին ժխտելը: Եվ որքան էլ մենք քննադատաբար վերաբերվենք Վլ. Սոլովյովի շատ գաղափարներին (ես, օրինակ, ընդհանրապես ժխտում եմ նրա՝ աստվածապետական հայեցակարգը), մենք պետք է ընդունենք նրա հսկայական և չմեռնող վաստակը: Նա անխոնջ հիշեցնում էր, որ քրիստոնեությունը ոչ միայն տրվածություն է, այլ նաև մարդու ակտիվությանն ու ազատությանը ուղղված **հանձնարարություն**: Մեզ հանձնարարված է Քրիստոսի ճշմարտության իրագործումը կյանքում և պատգամված է առաջին հերթին Աստծո Արքայության որոնումը: Եվրասիականների կենցաղային դավանաբանությունը կարծես մոռանում է Աստծո Արքայության և Աստվածային ճշմարտության այդ որոնման մասին, որը շատ բնորոշ է ռուսական ոգուն, բայց ոչ թուրանականին: Ուղղափառությունը չի կարող լինել միայն

պահպանություն, այն պետք է լինի աստվածամարդկային ստեղծագործական գործընթաց:

Եվրասիականները չեն նկատում ռուսական ուղղափառության ամենակարևոր առանձնահատկությունը, որով նա զանազանվում է արևմտյան քրիստոնեությունից՝ նրա վախճանաբանական բնույթը, ուղղվածությունը դեպի վերջը: Ռուսաստանի երկու կերպար գոյություն ունի՝ կայական (ստատիկ) և հարաշարժ, կենցաղային և հոգևոր: Եվրասիականները չեն ուզում տեսնել և ճանաչել ռուսական աստանդականությունը, Աստվածային ձմարտության ռուսական որոնումը, Կիտեժ քաղաքը: Նրանց ավելի դուր է գալիս իսլամի կենցաղային բարեկարգությունն ու անշարժությունը: Եվ դա վախ ու հակազդեցություն է ընդդեմ հեղափոխության: Եվրասիականները չեն հասկանում, ինչպես Դոստոևսկին էր հասկանում, որ ռուս մտավորականությունը ռուսական մեղքերն ու ախտերը և ձմարտության ռուսական որոնումն արտացոլող ռուսական-ազգային երևույթ էր: Ժամանակակից երիտասարդությունը չի սիրում ռուս աստանդականի կերպարը: Նա Նիկոլայ Ռոստովի գերադասում է իշխան Անդրեյից և Պիեր Բեզուխովից: Բայց պետք է հիշել, որ ուղղափառության ոճը փոխվում է. մտավորականությունը վերադառնում է եկեղեցի, և նրա մեջ վերադարձած անառակ որդին գերակշռող դեր է խաղալու: Ուղղափառությունը ամրացված չէ գեղջկական, քաղքենիավաճառականական կամ ազնվականական ոճին: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ եվրասիականները փոխվում են, և նրանց մեջ սկսում է ուժեղանալ պատմական հարաշարժության զգացումը:

Պ. Պ. Սուվչինսկին վեր է հանում սերնդափոխության շատ հետաքրքիր հարցը ու փորձում գնահատական տալ 19-րդ դարի սկզբի սերնդին ու նրա հետ կապված հոսանքին, որը նա իդեալիստական, խորհրդապաշտական ու գեղագիտական վերածնունդ է անվանում: Պատերազմի և հեղափոխության ժամանակ մեծացած եվրասիական սերունդն իրեն հարազատ չի զգում մեր կրոնական սերնդին և չի ուզում շարունակել նրա պատգամները: Այն հակված է հրաժարվելու այն ամենից, ինչ որ կապված է նոր կրոնական գիտակցության խնդիրների դրվածքի հետ: Նրա կամքն ուղղված է դեպի պարզեցում, տարրականացում, դեպի ուղղափառության կենցաղային ձևերը, դեպի տրադիցիոնալիզմը, որը երկշտ ու կասկածամիտ է ամեն տեսակի կրոնական ստեղծագործության հանդեպ⁸:

Կրոնական նոր սերնդի հոգևոր կացութաձևը շատ անբարենպաստ է նախորդ կրոնական սերնդի բարդ խնդիրներն ըստ էության գնահատելու համար: Իր ապրած փորձի հետևանքով ժամանակակից երիտասարդությունը վախենում է բարդությունից և պրոբլեմատիկությունից, ձգտում է տարրականության և պարզության, իր կամքն ուղղում է գործնական առաջադրանքների իրականացմանը: Դրա մի զգալի մասը հակազդեցություն է միստիկայի և ռոմանտիկայի, բարդացված իմացաբանության, վախճանաբանական տրամադրությունների դեմ: 20-րդ դարի սկզբի սերունդն իր ուսերին կրեց հին մտավորական աշխարհայացքը հաղթահարելու դժվարին գործը, երկար հոգևոր ճանապարհ անցավ, որպես մոլորյալ որդի՝ հայրական տուն վերադարձավ, իր քրիստոնեության մեջ ներդրեց իր հոգևոր մշակույթի ողջ բարդությունը, մեծ սրությամբ առաջադրեց խնդիրներ, որոնք նշանակություն ունեն հեռավոր ապագայի ու հավերժության համար: Մեր կրոնափիլիսոփայական հոսանքը ուղղված է ավելի հեռավոր ապագայի սերունդներին, և, եթե նրա առաջադրած խնդիրները ժամանակակից սերնդին չեն հետաքրքրում, ապա դրանով ամենևին էլ դեռ չի որոշվում այդ խնդիրների գնահատականը՝ ըստ էության:

Մենք պաշտպանում էինք հոգևոր մշակույթի արիստոկրատիզմը, մտքի արիստոկրատիզմը, պաշտպանում էինք այն, ինչն անօգուտ և անպիտան էր թվում: Բայց ժամանակակից սերունդը «աջից» նույնպես ժխտում է հոգևոր արիստոկրատիզմը:

⁸ Հասարակական-քաղաքական առումով՝ եվրասիականները, ընդհակառակը, շատ խիզախ են և նույնիսկ հեղափոխական:

տիզմը, նույնպես չի ընդունում աստիճանակարգությունը, որի հետևանքով էլ անհասկանալին ու անպիտանը նշանակություն ունի կյանքի ողջ սանդուղքի համար, ինչպես որ անցյալում այն ժխտվում էր ժուս «ձախ» մտավորականության կողմից: Հոգևոր արիստոկրատիզմի ժխտումը, մտքի բարդության ժխտումը, անշահախնդիր հայեցողության և ստեղծագործական խնդրակարգի ժխտումը բոլշևիզմ է, և այդ բոլշևիզմն ամենուր է, նա կա «աջերի» մեջ, կա նաև որոշ եվրասիականների մեջ: Սրանով ես ամենևին չեմ ժխտում, որ եվրասիականության առանձին ներկայացուցիչներ բարձր մշակույթի և հոգևոր առումով նրբագգաց մարդիկ են:

Անհարգալից վերաբերմունքը մարդկային մտքի, մարդկային ստեղծագործության հանդեպ, անշնորհակալությունը նախորդ սերունդների հոգևոր աշխատանքի նկատմամբ, նույնիսկ իրենց մեծ մարդկանց հարգել չկամենալը ժուսական մեղք է, ժուսական բնավորության ոչ ազնվագարմ գիծը: Նիհիլիզմը մնում է ժուսական արյան մեջ, նա նույն կերպ դրսևորվում է «աջից», ինչպես որ «ձախից», նույն կերպով հնարավոր է կրոնական հողի վրա, ինչպես որ նյութապաշտական հողի վրա: Ռուս գերուղղափառ մարդիկ պատրաստ են նույնպիսի դյուրությունը տապալել Պուշկինին, ինչպես որ նրան տապալեցին ժուս նիհիլիստները: Ռուս մարդիկ հեշտությամբ կիրաժարվեն Դոստոևսկուց և կջախջախեն Վլ. Սոլովյովին՝ անպատվության մատնելով նրա հիշատակը:

Ներկայումս ոմանք պատրաստ են հրաժարվելու 19-րդ դարի ժուսական ողջ հոգևոր մտքից, բուն ժուսական փրկչական գաղափարից՝ հանուն ժուս ուղղափառության ու ազգայնականության կատաղի և ժխտարարական հաստատման: Սակայն միգուցե մեզ ամենից ավելի անհրաժեշտը մեր հոգևոր մշակույթի ավանդույթի ու ժառանգորդության հաստատումն է՝ հակադարձելով ժխտարարական ու ջարդարարական բնագոյներին, հաղթահարելով մեր թաթարականությունը, մեր բոլշևիզմը: Ռուս մարդկանց պետք է ներարկել ոգու ստեղծագործական ջանքերի վեհանձն պաշտամունքը, հարգանքը մտքի հանդեպ, սերը մարդկային որակի նկատմամբ:

Ես ջանում էի մատնացույց անել եվրասիական տրամադրությունների բացասական և վտանգավոր կողմերը, բայց ես բնավ չեմ ժխտում այդ հոսանքի դրական կողմերն ու ներդրումը և եվրասիական վերջին ժողովածուի որոշ հոդվածների աներկբայելի որակը: Միննույն ժամանակ ես ընդունում եմ, որ նոր՝ հետհեղափոխական սերնդի մեջ ձևավորվում է հոգևոր-ազգային մտավորականության նոր տիպ՝ ավելի առողջ և իրատես, հոգեպես ավելի կոփված և ինքնաբերական երկվությունը հաղթահարած: Այդ ձևավորման մեջ մասնակցություն ունեն նաև եվրասիականները: